

ՔԱՐՈՋԽՕՍԱԿԱՆ

**ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ՀՕՐ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԱՋԻՆ ՀՍԿՈՒՄԻՆ
(6 Մարտ, 2025)**

«Տէ՛ր, ուսո՛ մեզ յաղօթս կալ» (Ղուկ. ԺԱ:1):

«Մի՛ ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք, գոհութեամբ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած» (Փիլիպ. Դ:6):

«Ոչ մէկ բանի համար հոգ մի՛ ընէք, այլ աղօթքներով եւ աղաչանքներով ձեր խընդ-րանքները գոհաբանութեամբ թող յատնի ըլլան Աստուծոյ»:

Մեծ Պահոց շրջանի այս երեկոյի քարոզի նիւթ ընտրեցինք Աղօթքն ու Երախտագիտութիւնը եւ Շնորհակալութիւնը, որովհետեւ երախտագիտութեան կամ շնորհակալութեան զգացումը ինքնին աղօթք է, եւ միայն երախտագիտութեամբ լեցուն սիրտէն բխած աղօթքն է որ կը հասնի երկինք՝ Հայր Աստուծոյ:

Հեթանոսաց Առաքեալը՝ Պօղոս, որ ենթարկուած էր բանտարկութեան, խոշտանգման, անհիմն քննադատութիւններու եւ մանաւանդ նաւախորտակման, բնաւ չէր յուսալքուած, այլ ընդհակառակը՝ միշտ խանդավառութեամբ եւ յոյսով նայած էր ապագային, եւ արդէն իր թուղթերուն կամ նամակներուն մէջ «Սիրոյ» եւ «Հաւատքի» կողքին աղօթելն ու շնորհակալութիւն յայտնելը ամէն ինչի համար եւ մէջ կը դարձնէ գլխաւոր նիւթը իր նամակներուն, երբ կ'ըսէ. «Ամէն ինչի համար միշտ շնորհակալութիւն յայտնեցէք Աստուծոյ»: Եւ արդեօք կա՞յ աւելի յանկուցիչ եւ արժանապատուութեամբ լեցուն զգացում մը, քան շնորհակալութեան եւ երախտագիտութեան զգացումը:

Մեր Տէրն ու Փրկիչը՝ Քրիստոս, իր երկրաւոր կեանքի ընթացքին օր մը կը բուժէ իրեն եկած Տասը Բորոտներ, որոնց բուժելէ ետք, ինչպէս ընդունուած սովորութիւն էր Հրեաներու մօտ, կը թելադրէ անոնց որ նախ լուացուէին Սելովամի Աւազանին մէջ, ապա ինքզինքնին ցոյց տային քահանաներուն, որոնք պիտի հաստատէին անոնց հիւանդութենէ մաքրուած ըլլալը: Տասը Բորոտները իրենց թելադրուածին պէս կ'ընեն եւ կը բուժուին: Սակայն վերջը, ասոնցմէ միայն մէկը կը վերադառնայ շնորհակալութիւն յայտնելու Քրիստոսի. ապա Աստուածորդին հարց կու տայ իր աշակերտներուն ըսելով. «Իսկ ո՞ւր են միւս ինը բուժուածները»:

Մարդ արարածին խոտելի յատկութիւններէն մին՝ իր միշտ դժգոհելու, գանգատելու եւ բողոքելու յոռի սովորութիւնն է: Մենք երբեմն ամենաանկարելորդ եւ աննշան բանը կորսնցնելու պէս կը սկսինք դժգոհիլ ու գանգատիլ, անտեսելով Հայր Աստուծոյ մեզի տուած իր միւս բարիքներն ու պարգեւները, մեր առողջութիւնը, մտային եւ հոգեկան շնորհները, նիւթական բարիքները, ընտանիքն ու բարեկամներու սէրը: Մենք կ'անտեսենք այս բոլորը եւ պահանջկոտ երեխաներու նման կը կեդրոնանանք չնչին բաներու վրայ, ինչպէս հետեւեալ պատմութիւնը ցոյց կու տայ:

Ամերիկացի զոյգ մը իրենց 3-4 տարեկան տղան հետերնին եկեղեցի կը տանին եւ ձեռքը տողար մը կու տան, որ դնէր նուէրներու ափսէին մէջ, խորհելով որ այդպէսով իրենց զաւակը պիտի վարժուէր փոքր տարիքէն եկեղեցիին տալու: Երբ ժամանակը կը հասնի եւ նուէրներու ափսէն կը բերեն տղեկին մօտ, ան կը սկսի դժկամութիւն ցոյց տալ իր տողարը ափսէին մէջ դնելու: Տղեկին հայրը տեսնելով որ ճար չկար, դժուարաւ տողարը առնելով կը դնէ ափսէին մէջ, եւ յանկարծ տղեկին «Տոլարս կ'ուզեմ, տոլարս կ'ուզեմ» լացն ու ճիշերը կը պատռեն եկեղեցւոյ վեհ լռութիւնը: Ներկաներ հազիւ կը յաջողին զսպել իրենց խնդուքը: Ի վերջոյ, լռեցնելու համար աղմկարար զաւակնին, ծնողները ստիպուած ուրիշ տողար մը կու տան անոր: Քարոզի ատեն, եկեղեցւոյ հովիւը դիմելով հաւատացեալներուն, կ'ըսէ. «Իրականութեան մէջ եղածը այդքան ալ ծիծաղելի չէր, որովհետեւ թերեւս այդ տղեկը մեր բոլորին զգացումներուն եւ մտայնութեան թարգմանը կը հանդիսանայ: Զիշդ է որ մենք մեր նուէրները կը դնենք, սակայն երբեմն ո՛չ այնքան սրտանց: Թերեւս մենք բարձրաձայն չենք ըսեր, սակայն վստահ եմ մեզմէ ոմանք կ'ըսեն, «Տոլարս կ'ուզեմ, եկեղեցին մեր տողարի՞ն պէտք ունի»:

Աստուածորդւոյն աշակերտները իրենց Վարդապետին դիմեցին, ըսելով. «Տէ՛ր, ուսո՛ւ մեզ յաղօթս կալ», իսկ Հեթանոսաց Առաքեալը՝ Պօղոս, իր կարգին Փիլիպպեցիներուն ուղղած իր նամակին մէջ կ'ըսէ. «Ոչ մէկ բանի մասին մի՛ մտահոգուիք, այլ շնորհակալութեամբ, երախտագիտութեամբ եւ աղօթքով ձեր խնդրանքները ներկայացուցէ՛ք Աստուծոյ»: Անեղծ եւ անկեղծ սիրով եղած աղօթքը սիրելի հաւատացեալներ, արդիւնք է Արարչին հետ մեր ունեցած ամուր կապին: Աղօթքը՝ այսպէս ըսած, տինամիք երկխօսութիւն մըն է մեր եւ Հայր Աստուծոյ միջեւ: Այն պարզ եւ ձեւական, հասարակ միջոց մը պէտք չէ ըլլայ մեր խնդրանքները ձեռք ձգելու, այլ միա՛կ եւ ճիշդ ձեւը մեզ պահելու Աստուծոյ ներկայութեան մէջ: Աղօթքը միայն միջոց մը պէտք չէ ըլլայ մեր խնդրանքները, աւելի ճիշդ մեր պահանջները ներկայացնելու Հայր Աստուծոյ, այլ առիթ մը որ մենք ալ մեր կարգին լսենք ու ենթարկուինք մեր Արարչին պահանջներուն: Ահա ճի՛շդ այս էր Պօղոս Առաքեալի հաւատքի ըմբռնած ձեւը: Ան յարատեւ յարաբերութեան մէջ պահած էր ինքզինք Աստուծոյ ամենազօրութեան, հաւատքին, սիրոյն եւ յոյսին հետ: Մեծ Առաքեալը ունէր երախտագիտութեան կատարեալ եւ ամբողջական հասկացողութիւն, որովհետեւ առաջին հերթին ան զօրաւոր կերպով կը հաւատար աղօթքի կենարար ոյժին:

Մեծ Առաքեալը, նախքան իր քրիստոնէութեան դարձը, ատելութեամբ լեցուած ժխտական անձ մըն էր, սակայն ետքը ան իր ամբողջ էութիւնը կեդրոնացուց մարդոց եւ իրերու նկատմամբ դրական մօտեցումին, ինչպէս Փիլիպպեցիներուն ուղղած իր նամակին 4-րդ գլխուն մէջ կ'ըսէ. «Եւ վերջապէս եղբայրներ, ա՛յն ինչ որ ճշմարիտ է, պատուաբեր է, արդար է, սուրբ է, ինչ որ գեղեցիկ է, շնորհալի, գերազանց է եւ արժանի գովասանքի, այդ բաներուն հետամուտ եղէ՛ք»:

«Այսօր է զոր արար Տէր, եկա՛յք ցնծասցուք ի նմա», կ'ըսէ Սուրբ Գիրքը. ու այս երեկոյ, կանգնած Մեծ Պահոց սեմին, թող երախտագիտութեամբ, շնորհակալութեամբ եւ աղօթքով յիշենք բոլոր անոնք՝ որոնք գիտցան մեր եկեղեցւոյ գեղեցիկ աւանդութեանց մէջէն ձեւ եւ կերպ տալ Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած երախտագիտական զգացումներուն: Ահա ա՛յս է մեր եկեղեցւոյ երախտաւորներուն այսօրուան նոր սերունդին թողած պատգամը. «Այսօր է զոր արար Տէր, երախտագիտութեամբ յիշեցէ՛ք անոնք՝ որոնք ձեզի կտակեցին այն՝ ինչ որ ունիք, այն՝ ինչին որ տէր էք»:

Այս Մեծ Պահոց նախասեմին, թող մեր Հայրերուն Աստուածը անմար պահէ երախտագիտութեան զգացումը մեր նոր սերունդի երիտասարդներու սիրտերուն մէջ, եւ անոնց տայ գիտակցութիւնը՝ աղօթքի արժէքին, բայց ո՛չ անձնական աղօթքին, այլ Առաքեալին իսկ բառերով, «Հաւատացեալներ միշտ պարտին աղօթել իրար համար» այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Ես կ'ուզէի միշտ յիշել Պօղոս առաքեալի խօսքերը. «Այս աշխարհը վայելողները թող չվայելողներուն պէս ըլլան, որովհետեւ այս աշխարհը անցողական է» (Ա. Կորն. 7:31):

ԱՆՏՐԷ ՄԱՐԻ ԱՄՓԵՐ

Թող «չափէն աւելի» խելացի մարդիկ շարունակեն վիճիլ աստուածաշնչային իրողութիւններու արժանահաւատութեան շուրջ. համաշխարհային պատմութիւնը վաղուց անտի լուծած է այդ հարցը: Պատմութիւնը բազմիցս հաստատած է, որ չի կրնար «հէք-իաթ» ըլլալ ա՛յն՝ ինչը որ կործանած է կուռքերը եւ ստիպած երկրագունդի ժողովուրդներուն երեսնիվայր իյնալ Աստուծոյ եւ Քրիստոսի՝ Գողգոթայի զոհին առաջ: Զի՛ կրնար «առակ» ըլլալ ա՛յն՝ ինչ որ միշտ սերմանած է եւ տակաւին կը շարունակէ աշխարհի բոլոր մարդոց մէջ սերմանել ճշմարտութիւն, Ազատութիւն եւ Սէր: Զի՛ կրնար «առասպել» ըլլալ ա՛յն՝ ինչ որ կը կործանէ «խաւարի գործերը» եւ մարդոց կը բերէ «կեանքի խօսք եւ լոյս»: Զի՛ կրնար «մտացածին» ըլլալ ա՛յն՝ ինչ անթիւ-անհամար մեռած մեղաւորները ազատած է արատներէն, բերած է խաղաղութիւն անոնց հոգիներուն, տրտմածներուն՝ մխիթարութիւն եւ յուսահատածներուն՝ յոյս:

ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ԱՆՏԷՐՍԸՆ

Յոհան Սեպաստիւրն Պախ ամէն նոր ստեղծագործութիւն կը սկսէր Աստուծոյ օրհնութիւնը խնդրելով եւ կը վերջացնէր գոհութեան աղօթքով: Պախ հարուստ գրադարան ունէր: Ան մշտապէս կ'ուսումնասիրէր Աստուածաշունչը եւ յաճախ լուսանցքներու մէջ այսպիսի գրառումներ կ'ընէր. «Այս բաժինը Աստուածահաճոյ երաժշտութեան հիմք կրնայ դառնալ»:

Պախ շատ կը սիրէր Հին Կտակարանեան այն դրուագները, որոնց մէջ կը նրկարագրուէին Աստուծոյ փառաբանութեան հանդիսութիւնները Տաճարին մէջ: Ան կը գրէ.

«Աստուած միշտ կու գայ Իր մեծութեան ողջ լիութեամբ, երբ կը հնչէ զինք փառաբանող երաժշտութիւնը»: